50 տարուայ գոյութեամբ, ուր այս տարի սովորում էին 120 աշակերտ – աշակերտուհիներ 2 ուսուցչով։ Դպրոցում կայ նաև մի գրադարան՝ 70 հատորից աւելի հայերէն գրքով։* Տղամարդկանց մօտ $^1/_3$-ը գրագէտ է։

Գիւղն ունի փոքր՝ բայց ճաշակով շինուած գեղեցիկ մի եկեղեցի Ս. Յովհաննու անունով, ուր գտնուում է ընտիր Ձեռագիր մի աւետարան։ Գիւղում կայ նաև երկու խանութ։

Սակայն Սանգիբարանի զարդն է կազմում Բառֆանքար-ը[1] (բարամքար), որը գտնուում է գիւղի հարաւային կողմը, մօտ կէս ժամ հեռաւորութեան վրայ, Խոշկարի սարի փէշին, մի գեղեցիկ և զով տեղ։ Դա մի ընդարձակ և միևնոյն ժամանակ հրաշալի այգի է, ունի զուլալ, հարուստ և սառնորակ աղբիւրներ, հրաշալի և առողջարար կլիմայ, իսկ ամբողջ այգին ծածկուած է ծառերով և կանաչով։

Բառֆանքարը շնորհիւ իր դիրքի և գեղեցկութեան հիանալի զբօսատեղի է կազմում գիւղացիների համար, որոնք յաճախ գնում են այնտեղ և մնում ամբողջ օրը, նոյնիսկ շաբաթներով։ Այնտեղ գնում են նաև օդափոխութեան, շընչելու նրա լեռնային կազդուրիչ օդը, մօտիկ գիւղերից մարդիկ. գալիս են նոյնիսկ Նոր—Ջուղայից. այնպէս որ Բառֆանքարի հռչակը տարածուած է ոչ միայն գաւառում, այլև Նոր-Ջուղայում և այլ տեղերում։ Ամեն մի ճամբորդ կամ օտարական, Փէրիա մտնելիս անպատճառ այցելում է այդ գեղեցիկ օդասուն վայրը, որ նշանաւոր է ոչ միայն իրրև զբօսատեղի, այլև խաղողի տեռակներով։ Այդտեղ կան բազմապիսի և ընտիր խաղողներ։

Այս գիւղը նոյնպէս ենթակայ է շրջակայ ինքնիշխան աղաների կամայականութեանց, որոնք իրենց քմահաճոյքի համաձայն յաճախակի հարստահարում են խեղճ գիւղացիու-

* Նոր—Ջուղայեցի Դաւիթ Կ. Դաւթեանը զարմանալի ասկունութեամբ պաշտօնավարել է այս դպրոցում քառասուն տարուց աւելի և տուել է բաւական արդիւնք, կրթելով ամբողջ երկու սերունդ։

1) Պարսկերէն բառֆ նշանակում է ձիւն, իսկ անքար՝ շտեմարան, ուրեմն և սարը մշտական ձիւնով ծածկուած լինելու պատճառով կոչում է Բառֆանքար։